Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի «Սարալանջի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (22 դասաժամ), կերպարվեստի(2.5 դասաժամ),երաժշտության (2 դասաժամ),տեխնոլոգիայի (4 դասաժամ) ուսուցչի և զինղեկի (1 դրույք)թափուր տեղի համար

Ֆիզկուլտուրայի, կերպարվեստի, երաժշտության, տեխնոլոգիայի ուսուցչի թափուր պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին»ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

2. Անձնագրի պատճենը,
3. Ինքնակենսագրություն (Ձև 4)
4. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
5. Մեկլուսանկար՝ 3x4 չափի,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 14-ներառյալ, ամենօր՝ ժամը10:00-ից 15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի սեպտեմբերի 16-ին ժամը14:00-ին, Սարալանջի հիմնական դպրոցում, հասցեն՝ՀՀ Կոտայքի մարզ գ. Սարալանջ,1-ին փողոց, շենք21:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 00 46 10 :

Դպրոցի տնօրեն՝ Ք. Մանուկյան